

Ազդիս առանձին հաղարարձուք եւ
հին տարւայն ալ, այսօր նոր տարի մը
նաև ևս Արգաղան Հայր, Հայ ազգը
կ'ուխտէ սց նոր տարւայս մէջ գործել
միաբանութեամբ և կը հրձուի որ իւ-
րաքանչիւր հասարակութիւնիւր պար-
տիրը քաջ ճանաչելով ազգին ապա-
գային բարւորութիւն համար անխանջ
կը ջանան, ըստնայելով բիրտն և աշ-
խատանք :

Այս պարտականութիւնը ճանցող
հասարակութիւնէն մին ալ Ա. Աթո-
ռոյս միաբանութիւնն ըլլալով իրա-
ւունք ունի այսօր ուրախ ըլլալու, որ
նաքն ալ յաջողած է ունենալ ազգին
մէկ մասի մանուկները կրթելու կա-
րողութիւն, և կը ջանայ նաւարկել
կրթութեան յու շիկընթաց նաւակով
տգիտութեան ովկիանոսի յանդուդն
ալիքները պատառել ու հասնիլ լւասու-
ւորութեան նաւահանդիսարը, որ է
միակ կամքը, և իւր ըլլեց պահկումք :

Աւստի Ա. Հայր հասարակութիւնո
մասքերելով, որ իւր Ապօլոեն կը ներ-
կայանաք տգիտութեան գերութիւնէ
ազատելու ջանք ջննայելով մէզ, ուս-
տի կը մազմէնք նոր տարւայս մէջ նոր
կեանք և նոր տարիներ եւս որ լիսինն
ջանաք աշխատիլ և Չեր փափաքանացն
համիլ, ինպաստ մատող մանկանցու:
կը մազմէնք Արարուէն սէր և միութի
թօրդոմեան ազգիս և բաղմաքիրոնն
միաբանութեան նոր կեանք և մաս-
ւոր լրաց ապագաց կենացս մէջ: Յաղը
ըլլանց մէզ երկինք տալ:

Երդ Ա. Հայր հաճեցէր ընդու-
նիլ, սյս մեր երախասորին ինչո՞ն ըլ-
նորհակալութեան, զոր ներկայիւս
Չեզ կը մատուցանեմք յանկեղծ պրտէ:

1870 Յունիս 4.
Տեղապահներ:

ԱՀ. Ժո. Ա. Յժ.
Ակադեմիական
Անդադիլ:

Խ Ո Բ Հ Բ Դ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ծ Ո Վ Ո Ւ Վ Ր Ա Յ Ց

Արկինքը պարզէ, ծովը խաղաղ,
շոգենաւոր կը սրանց և ես կը խորհիմ:
Խորհիմ և Վասուծոյ երեք մեծ լո-
ւեղծուածները կը ներկայանան աշաց
և մասց տեսարանին, մերեւէն երկինք
ներքեւէն ծով. և երկուքին միջնավայ-
րին մէջ էս մարդ: Արկինքը անհուն
և անեղք, ծովը լայնատարը, խոկ ես
մարմնով սահմանաւոր և հոգւով՝ ան-
սահման, ծովէն ընդարձակ և երկինք
քէն բարձր, Վնդարձակ և բարձր եմ
ես այն հոգւով, վասն զի սցն վացրիկե-
նիս մէջ մոքովս կը թափանցեմ ծո-
վուն խորքը և կը քննեմ ու կը գատեմ:
սրտովս կը բարձրանամ երկինք, մը թ-
նովրաը կը ձեզ զքեմ, ամսուերու և առա-
նամանեաց գաւառոներին կ'անցնիմ և
երկնակամարի ամենավերին բարձրու-
թիւնէն կ'ամփափեմ մասց մէջ բոլոր
տիեզերը, երկինք և երկուր, ծով և
ցամաք և համայն արարշութիւնը:
Այս ամենէն յետո կը խօսիմ նաև
ընութեան Արարջի հետ, կ'աղօթէմ,
նորս կատարելու թիւնց եւ մեծու-
թեան վրաց կը խորհիմ, կը մասնէմ
և կ'պանչանամ: Կնչ անհունութիւն
և յնչ օքանչելք:

Կ'ամբոստի երկինք, կը մըրկի օդը,
կ'ալեկոծի ծովը, մարմինս կը սարսի և
կը տառանի, սակայն հոգիս անսասան
է: Քայց միթէ հոգիս սասանմունք
չունի, միթէ հոգիս չափեկոծիք: Այս
կը սասանի և կալեկոծի, բայց իւր ա-
լեկոծութիւնը անկախ է ծովի ալեկո-
ծութիւնէն և տիեզերաց սասանու-
թիւնէն: Հոգիս կ'ալեկոծի նաև ցա-
մաքի վրաց, նաև այն ժամանակ, երբ
երկինքը խաղաղէ, երկինքը ծիծաղա-
ժողիս և բովանդակ բնութիւնը՝ ան-

զորը : Վելէն է հոգւոյս ալեկոծութիւնը : Խղճիս վրդովմանքէն և սպատիս անհանգստութիւնէն : Այս իմ հոգիս եւս անհուն ծով մի է, որ երբեմն կը խաղաղի և երբեմն կ'ալեկոծի . իմ սկզբս անեղո երկնակամար մի է . որ երբեմն կը մժագնի և կը փաթօրիի և երբեմն աղեգակնաղարդ և աստեղաղարդ կը շողչողայ : Վիտքս արագահանս նաւ մի է . որ մի ակնքարթի մէջ իւր խորհրդածութիւնն բոլոր բեռներով կը պահաց և կը չափէ ավելի անսաներու անհուն տարածութիւնը : Այսպիսի մասիսհութեանց մէջ կը զգամ ես թէ՞ որչափի մեծ ստեղծած է զիս իմ Վրարիչը , բայց կը զգամ նոյնպէս թէ որչափի ինքնիքո կը նուառ տացնեմ ես երբեմն :

Յանդ փաթօրիի ծովը , թող որսաց երկինքը , չեմ սասանիր ես , եթէ կամիմ : Բայց թող ժպտի համայն բնութիւնը , ես կը սասանիմ , եթէ կամքս կորուսած եմ : Վհագին ծովը կարող չէ զիս ընկղմել և անունս անհետացը նել . բայց ես կարող եմ մնուացութեան մէջ թաղել իմ կեանքս և յիշառակա : Այս տեղն կը գուշակեմ ահա , որ որչափ մեծ և հզօր եմ , այնչափ անզօր և ակար , մեծ եմ հոգւով

և տկար մարմառս , հզօր առաքինութեամբս և անզօր մոլութեամբս : Կը գուշակեմ որ Վրարիչն է , որ մեծ և հզօր ստեղծած է զիս . և ես եմ , որ կը տկարացնեմ զիս : Հետեւապէս կ'իմաստափեմ , որ ես Վասուծով միայն կարող եմ մեծ և հզօր մնուլ , Վասուծով միայն կարող եմ տիեզերաց իշխել , ծովք քննել , երկինքը զննել , ցամաքը չափել և ասհմանաւոր մարմնավս անսահման կեանք ունենալ : Ի՞նչ է անդնդախոր ծովք Վասուծոյ առջեւ եթէ ոչ կաթիլ մի ՚ի գուլք : Ի՞նչ է անեղո երկինքը , եթէ ոչ մոգաղաթմի . զօր Վասուծած երբ կամի՝ կը գալարէ : Բայց ոչ ապաքէն և ես Վասուծոյ պատկերն ու նմանութիւնն ունիմ : Վրդ՝ ով Վրարիչ , մեծութէն և զօրութեան մէջ պահէ զիս , մի թողուր ծովի պէս ալեկոծիլ , երկնքի պէս փոթորկիլ , երկրի պէս ցամաքիլ և զիշերուան պէս խաւարիլ : Դիտեմ ես և կը խաստովնիմ , որ քեզմով միայն մեծ եմ ես և հզօր , քեզմով միայն ինչ եմ ես , իսկ առանց քեզ՝ ովնել :

4 Եկե 1869 :

Վիշտիւանին վրայ :

Ա. Ռ. Ա. Կ

Բ Ե Ր Ա Յ Ա Կ Ա Ն

Վը պատմուի թէ ատենով անասուններն անբան ,
Վէկտեղ գալով կը խօսէին իբր մարդիկ բանական .

Օձուն լւզուն շատ լու գիտէր մեր նախամայրը Եւան ,
Եւ Բաղամամիշուն խօսքին կուտար ուղիղ պատմախան :

Վանց նման տարօրինակ կան շատ բաներ պատմածած ,
Որ հին մարդիկ աս ամենուն ականատես են եղած ,
Վհա անանց մէկ պատմութիւնն իբր օրինակ հսու գքուուծ ,